

10855



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հատրե Սիմիդյան

«09» 10 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 207 - 24

Նախաձեռնող՝

«ԳՈԼԴԵՆ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ

Արագածոտնի մարզ, Կաքավաձոր, 5 փ., 1 նրբ., տ. 3

Գործունեությունը՝

Օթևանի տուֆերի հանքավայրի հյուսիսային  
տեղամասի արդյունահանում

Արագածոտնի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 207 - 24

«09» հոկտեմբեր 2024թ.

Արագածոտնի մարզի Օթևանի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«ԳՈԼԴԵՆ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն նախագծային փաստաթղթեր

Գործունեության տեսակը՝

/Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արագածոտնի մարզ, Մեծաձոր համայնք, Օթևան բնակավայր

**Ներածական մաս.** Օթևանի տուֆերի հանքավայրի հյուսիսային տեղամասը գտնվում է Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի Օթևան բնակավայրի վարչական տարածքում: Հայցվող տարածքը Օթևան բնակավայրից գտնվում է 1.5 կմ հեռավորության վրա:

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով հայցվող տարածքի 7.57 հա հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ արոտավայր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն) 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի, նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Հանքավայրի պաշարները հաստատվել են տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի ապրիլի 11-ի թիվ 632-Ա հրամանով ըստ A և B կարգերի 1100.2 հազ.մ<sup>3</sup> քանակով:

Տեղամասի տուֆերը բավարարում են «Պատքարեր լեռնային ապարներից» 4001-2013 ԳՈՍ-ի պահանջներին և պիտանի են ուղիղ կտրվածքի պատքարի արդյունահանման համար: ԳՕՍ-ին չհամապատասխանող տուֆերից ստացվող խճի և ավազի (ԳՕՍ 22263-76 «Խիճ և ավազ ծակոտկեն լեռնային ապարներից» և ՀՍ 151-96 «Խիճ և ավազ գեղազարդային ծակոտկեն



հրաբխածին ապարներից:) օգտագործում որպես լցանյութ բետոնի և այլ տեսակի շինարարական աշխատանքների համար:

Արագածոտնի մարզի Օթևանի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասի ծայրակետային կորդինատները ARM WGS-84 կորդինատային համակարգով հետևյալն են.

1. x=4472828	y=8419374,
2. x=4472856	y=8419428,
3. x=4472777	y=8419561,
4. x=4472828	y=8419609,
5. x=4472844	y=8419763,
6. x=4472793	y=8419775,
7. x=4472712	y=8419775,
8. x= 4472697	y=8419790,
9. x= 4472611	y=8419794,
10. x= 4472606	y=8419615,
11. x= 4472641	y= 8419615,
12. x= 4472641	y= 8419454,
13. x= 4472733	y= 8419390:

Նախագծով նախատեսվում է.

- տեղամասը շահագործել բաց եղանակով՝ 1100.2 հազ.մ<sup>3</sup> արտադրողականությամբ /մարվող պաշար/, տարեկան 55010 մ<sup>3</sup>, տուֆի զանգված,
- արդյունահանվող պաշարների քանակը կազմում է՝ 807.540 հազ.մ<sup>3</sup>, տարեկան 40377 մ<sup>3</sup>,
- մակաբացման ապարների ծավալը՝ 119.1 հազ.մ<sup>3</sup>:

Նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի պարամետրերն են՝

- բացահանքի առավելագույն երկարությունը՝ 385.0 մ,
- բացահանքի առավելագույն լայնությունը՝ 235.0 մ,
- մշակվող տուֆերի հաստաշերտի միջին հզորությունը՝ 14.55 մ,
- բացահանքի առավելագույն խորությունը՝ 16.05 մ,
- բացահանքի օտարման մակերեսը՝ 7.57 հա:

Հանքավայրում աշխատանքները սկսվելու են բացահանքի հյուսիս-արևմտյան մասից՝ անցնող ավտոճանապարհից դեպի հանքավայր մուտքային ավտոճանապարհների անցումով:

Մուտքային ավտոճանապարհի երկարությունը դեպի հանքավայր կազմում է 100-150 մ, որի առավելագույն հաղթահարվող թեքությունը՝ 10-15% է:

Հորիզոնների բացումն իրականացվելու է մուտքային ճանապարհից կապիտալ խրամի անցումով, որից հետո կատարվելու է պիոներական խրամի անցում: Պիոներական խրամների անցումը կատարվելու է CMP-026/1 մակնիշի քարհատ մեքենայի միջոցով: Հաջորդ հորիզոնները նույնպես նախատեսվում է բացել մուտքային ավտոճանապարհից կտրող խրամի միջոցով:

Հանույթային աշխատանքները նախատեսվել է կատարել ընդլայնական միակող, ցածրաստիճանային մշակման համակարգով: Հանույթային աշխատանքներն իրականացվելու են CMP - 026/1 մակնիշի քարհատ մեքենայով:



Ուղիղ կտրվածքի քարերի արդյունահանման ժամանակ առաջացած արտադրական թափոնները՝ 25031.5 մ<sup>3</sup>/տարի, տեղափոխվելու է 5-10 մ հեռավորության վրա և կուտակվում, այնուհետև վաճառվում, որպես բետոնի թեթև լցանյութ:

Հանքավայրի շահագործման սկզբնական շրջանում մակաբացման ապարները պահեստավորվելու են բացահանքի սահմաններից դուրս՝ լցակույտերի տեղամասում:

Արդյունահանման ընթացքում՝ մինչև 5-րդ տարվա վերջը, ձևավորվելու են 2 ժամանակավոր արտաքին լցակույտեր: Առաջին լցակույտում տեղափոխված մակաբացման ապարների առավելագույն բարձրությունը կազմելու է՝ 5.5 մ, իսկ 2-րդ լցակույտինը՝ 3 մ: Առաջին լցակույտի զբաղեցրած մակերեսը կազմում է՝ 1800 մ<sup>2</sup>, իսկ երկրորդինը՝ 1700 մ<sup>2</sup>:

Շահագործմանը զուգընթաց արտաքին լցակույտից մակաբացման ապարները տեղափոխվելու են բացահանքի արդեն արդյունահանված տեղամաս՝ ստեղծելով ներքին լցակույտաառաջացում:

Ընդունված է լցակույտաառաջացման բուլդոզերային եղանակը:

Օգտակար հանածոյի արդյունահանումից հետո իրականացվելու է խախտված հողերի վերականգնում, որի ժամանակ մակաբացման ապարները տեղափոխվելու են բացահանքի տարածք և հարթեցվելու են:

Քարհանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է կտրման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվելու է GAZ մակնիշի AC-4.8 (GAZ -53-12) ջրատար մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով:

Բացահանքի շահագործման ավարտից հետո իրականացվելու է ռեկուլտիվացիայի աշխատանքներ 4.37 հա տարածքում:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա:

Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 1618.15 հազ. ՀՀ դրամ, որից կենսաբանական ռեկուլտիվացիայի համար նախատեսվել է 500.0 հազ. ՀՀ դրամ:

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ հանքավայրի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել:

Օթևանի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասի տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում: Բնության և մշակույթի հուշարձաններ հաշվառված չեն:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

-լեռնատրանսպորտային միջոցների վրա չեզոքացուցիչ սարքերի տեղադրում՝ արտանետումներն կրճատելու նպատակով,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաներում՝ դրանց հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,

-մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում մասնագիտացված ընկերությունների տարածքում,

-կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբավայր՝ կնքված պայմանագրի հիման վրա,

-փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, հանքախորշեր, լցակույտեր, մոտեցնող ճանապարհներ և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,



-կեղտաջրերի հավաքում բետոնապատ անթափանց հորում, որը պարբերաբար դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով, պայմանագրային հիմունքներով,

- խախտված տարածքների ռեկուլտիվացիա, որն իրականացվելու է բացահանքի շահագործման ավարտից հետո,

- բանեցված մեքենայական յուղերի և քսայուղերի փոխարինում մասնագիտացված ընկերություններին կողմից:

Բնապահպանական միջոցառումների համար ընկերությունը նախատեսել է հատկացնել 300.0 հազ ՀՀ դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1.մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամսական մեկ անգամ հաճախականությամբ,

2. աղմուկի մակարդակի պարբերական չափումներ՝ ամսական մեկ անգամ,

3.լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,

4.օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով, հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ նվազագույնը տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,

5.կենսաբազմազանության մշտադիտարկում՝ ըստ ահրաժեշտության՝ հիմնվելով հայցվող տարածքում բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների հայտնաբերումից:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 300 հազ. դրամ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի Օթևան բնակավայրում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ



- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի № 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

-Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

- Անհրաժեշտ է ապահովել հաշվետվությունում ներկայացված ռեկուլտիվացիան բացահանքի շահագործման ավարտից հետո:

-ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

### ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԳՈՒԴԵՆ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Օթևանի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Հովիկ Մեսրոպյան